

կղթարայտակ ընդարձակ կալատեղին , որուն  
200 քայլ երկայնութիւնն և 100 քայլ լայ-  
նութիւնն անձամբ շափեցի . Պալատն , ամ-  
բարանցն , կալատեղին , հանգերձ ներքին  
ընդարձակ անզղիկան պարտիզով ու լճավ՝  
կղզի մը կը ձևացնեն , շրջապատեալ զե-  
տակէ մը , որ արիշ բազմաթիւ առուներու  
և ծառուիներու հետ երկին սոսորութեան կը  
ծառայէ : Որչափ կը ներէր ժամանական  
շրջեցայ լայնատարած կալատածին մէկ քանի  
կողմերը , և ականատես վլայ եղայ խոալա-  
կան երկրագործութեան զարգացման և յա-  
սածակիմութեան , երկրագործական մեքենա-  
ներու կատարելութեան և արագութեան ,  
բնակչաց գործանկութեան և գործոց բարեյա-  
ջող բաժանման :

Երրորդ օրը երեկոյեան գէմ՝ գո՞ւ և ե-  
քախապարտ սրտով՝ մեկնեցայ հա-ջրանէն  
դէպ ի վենետիկ , ուղեկցութեամբ վերցի-  
շեալ բարեկամի՞ն Տիրոյեան վարդապետի հետ ,  
որուն յանձնուած է Համալսարանի ուսանո-  
ղաց վարչութիւնն , որոնք կա-տրոնի մէջ  
ամսօրեայ զիւղազուարնութենէ մը վերջը պի-  
տի վերազանյային Պալուա քալաքին Մու-  
րաստեան վարժարանը : Գերապատիւ ուղե-  
կից պասմեց ինձի ճանապարհին մէ ինչ-  
պէս շանիւք վաշունոյ վարդապետին (որ  
շինայելով իւր ժերութեան հասակին ձմեռ  
ատեն յօդարկամ եռանգեամբ յանձն առեր  
էր անձամբ . գնալու Հոռով և նախարարաց  
հետ բանակցելու) շնորհուեր էր այն արտօ-  
նութեան իրաւունքը , որպէս վենետիկոյ Մու-  
րաստեան վարժայելեան վարժարանին աւարտա-  
վարժ ուսանող , առանց որիշ քննութեանց  
և վկայագրերու , միայն նոյն վարժարանին  
վարչութեան վկայագրով՝ կարող պիտի լինին  
անցնիլ խոալից համարականական ընթացից  
մէջ մասնագիտութիւններ ուսանելու :

Այսպիսի բախատար և անակնկալ հան-  
դիպումերէ վերջը՝ զիշերուան մը 10ին կը  
գանուէի վենետիկոյ կայարանին մէջ , սակայից  
Գոնդուալար մը՝ լապտերներու և ալիքներու  
խառն ցալացմանց մէջ Մեծ Օրանցըց կտրե-  
լով՝ հասուց զիս թրիտանիոյ իշխանին առնիւ :

ՎԱՂԻՆԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐՆ

### ՅԱՐԱԿԱՆ ԵԶՔ

...•••••••••

**Յ**ԵՆԹԱՑՄԱՆ մեր ազգային պատմութեան  
երկու անզամ յիշատակուած են միայն Առ-  
էկզ կամ աւելի ճիշդն Յարակէզք . մին՝  
Արայի գէպիկին մէջ , երբ Շամիրամ գեղեց-  
կին Արայի անկումն ու Հայոց բորբոքումը  
տեսնելով գոյեց . « Հրամայեցի աստուածոյն  
իմոց լեզու զվերս նորա , և կենգանասցի » .  
բայց երբ տեսաւ որ կենգանաթեան նշան  
ցոյց չի տար , անոր դիակը խոր փսփի մը  
մէջ նետել տալէն յետոյ , իւր հոմանիններէն  
մին Հայոց ցուցընելով ըստա . « Լիզեալ աս-  
տուածոյն զԱրայ և կենգանացոցեալ լցին  
զիփափատ մեր... » : Ապա Շամիրամ « կանգ-  
նէ և նոր իմմ պատկեր յանուն դիւաց , և  
մեծապէս զորիւք պատուէ . ցուցանելով ա-  
մենեցուն , իւր թէ այս զօրութիւն ատառա-  
ծոցն կենգանացուցին զԱրայ » . (Խոր. Ա ,  
ԺԵ) : Իսկ երկրորդ յիշատակութիւնն եղած  
է Մուշեղի գէպիկին մէջ . այսպէս՝ « իրեւ-  
արան զմարմին սպարապետին Մուշեղի ի  
տուն իւր , ոչ հաւատային ընտանից նորա  
մանուն նորա , թէպէտ եւ տեսանէին զզուփ  
նորուն զատ ի մարմնոյն անտի . զի ասէին .  
Դորա յանթիւ ճակատ մուեալ էր , և վեր  
երբեք չըր տաեալ . ոչ նետ մի զիպեցու-  
երբեք , և ոչ այցոց զինու խոցեալ է զզա :  
Խոկ կէսր յանելցոյ ակն ունէին նմա . մին-  
չե զզուփին անգէն ի կոճեզն կարեալ՝ կցե-  
ցին , և հանին եղին ի տանիսն աշշարակի  
միոյ , ասէին՝ թէ զան զի այր քաջ էր ,  
առէզզ իջաններ և յարուցաննեն զզա : Պա-  
հապան կային և ակն ունէին յառնելոյ ,  
մինչեւ նեխեցաւ մարմինն : Ապա իջուցին  
յաշտարակի անտի , և լացին թաղեցին զնա  
որպէս օրէն էր : (Բուզ. Ե , 19.) :

Վաղական վարդապետ կը սմալի երբ  
« Յարակէզ » կոչէ և համարի մեր որիշ և նո-  
րագոյն առասպելաւանդ թագաւորի մը՝ Ար-  
ատաւազոյ երկու Շաներն , և „ Սեւա և Ապէ-

տակ, որ յար լեզուն զկապանս նորա «», զորի մէջ կը բերէ հ. Ղ. վ. Ալիշան. (Հին հաւատց Հայոց, երես 178, վենետ. 1895): Խորհնացոյ և Բուզանդայ վերոյիշեալ վը-կայութիւններէն բացայացա կերպով կ'երևայ թէ՝ Յարալէզք Արտաւազգայ շներէն տարբեր պաշտօն ունէին, այն է՝ «յառաջին ժամանական արալէզք լինէին զլիբաւորս և ողջացուցանէին....» (Եղնիկ Ա., ԻՒ). Կոյն-պէս նաև՝ «Յորժամ վիրաւոր որ անկեալ ի պատերազմի զնեցի՛ թէ լիփիցէ և ողջացուցանիցէ, զոր արալէզք կոչեն....», (անդ). ուստի սխալ է նաև կարծեն թէ Յարալէզք մարդարպոն ալ կ'ընդունէին, զոր հերքած եմ ուրիշ տեղ: (Տես Մալի հանդ. 1895 երես 602-3):

Թէ ինչ էին Յարալէզք. — այս էջեւուն մէջ իսկ տեսանց թէ «Յարալէզք աեւակ մը աստուածացեալ շուներ էին ք:

(Բաղմ. հանդ. 1897 փերբուար, երես 77, ծանօթ. 2): Այս հետեւոթիւնն հանած էինք Եզնկայ սա խօսերէն. «իրեւ զծովացովն՝ զորի ի կոմիկ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ, և զառիկն ի շանէ»... «և ոչի ի շանէ ինչ ելեալ, եթէ...» (Ա., ԻՒ): Մեր սիրելին և Նահապեան հ. Ղ. վ. Մ. Ալիշան ևս այս կարծիքէն է, վասն զի կ'ըսէ. «Շամիրամայ շնորհուած կենապանիք իրեն ոչ անպատճան շունք են, որոց լըողութիւնն ամենուն յայտնի է. նախնիք այլ շունէ ձեւացած կ'ըսէին զլուլէզն, կամ շնակերպ, շնախառն»: (Հին հաւատց Հայոց, երես 178):

Բարելացոց Մարդուկ աստուածն ալ ունէր իրեն հետեւորդ շորս հատ շուն, օրմնէ շորս շնաստուածք Մարդուկի» կոչուած են արձանագրութեան մը մէջ, և հետեւեալ անունները կը կրեն.

►† ≈≈≈ ≡ ≡ (Ուկումու) = «յափշտակիշն».

►† ≈≈ ≡ ≡ ≡ (Ուկումու) = «ուսիշն».

►† ≈≈≈ ≡ ≡ ≡ (Իկումու) = «կորզիշն».

►† ≈≈≈ ≡ ≡ ≡ (Իւրեպու) = «յագեցուցիշն»:

(Raw. WAI, Բ, երես 56, տող 22-25):

Արդէն ըսած ենք թէ Պրն. Մերովիք Ալիշանին քոյլ կը զանուի զանիկ մը, որուն վերայ քանդակուած է Մարդուկ, զանի վերայ բազմած և առջև շուն մը: Ասոր վերայ աւելցունենք նաև թէ Բարելաստանի Մարդուկրախտին (Ա. Գրոց Մերովուակազդանն, մեն Դ. Թագ. ի, 12. — և Ես. Ղթ, 1) թագաւորին պատահանող ուրիշ արձանագրութեան մը վրայ կը աեւանուին՝ ի մէջ այլոց՝ շուներ ևս: (Հման. Rawlinson, WAI, Դ, երես 43):

Արդ՝ նկասելով որ Բարելացոց, Մարդուկ աստուծոյ հետեւորդ շորս շուներն՝ աստուածոց կարգ անցած են, և թէ Յակոբ Մրձեցի իւր ա ի վերա անկան կոց» բանաստեղծութեան մէջ կ'ըսէ, թէ կը պաշտէին ի խառան ուռչեց, զա (մարի դկալ-

ռուս) = «Տէր ընդ շունս» (ZDMG, իթ, երես 410), կը հարցանէինց թէ «Հենց կրնար Մարդուկի շանց հետ նոյն համարել մեր Յարալէզքն»: (Բաղմ. հանդ. 1897, երես 77, ծանօթ. 2): Բայց այս ամէնը կասկածով և ատակուսանօց, առանց հաստատ ապացուցի. միայն երկու դրացի ազգաց մէջ ալ աստուածացեալ շանց զօյութիւնը նոյն հետեւութեան տարած էր զիս և կասկածի ենթարկած: Այն օրէն ի վեր ուրիշ շօշաբելի ապացուցներ կը փնտուէի՝ կարծիքս հաստատելու համար. և ան զույց Քօյնչնակէն ելած կոտրած քարի մը կտորին վերայ, որ կը պահուի այժմ բրիտանական թանգարանին մէջ (K. 8964):

Այս հաստակուտորն՝ որ Բարելաստաներէն զրուած է, Մարդուկ աստուծոյ ուղղեալ մազ-

թանաց մէկ մասը կը բոլանդուիկ, յորում երկու անգամ յիշուած է Մարդուկ իրեւ «կենացնացուցիչ զիականց», ճիշջ մեր թարագլէներուն ընծայուած պաշտօնին նման. միայն թէ հատակոսորիս վրայ ի գուը փրն-

(ՍիւլիԳ-ՄՈՒԼՈՒ-ՇԱՐ մու-բալ-լիտ ամիլու պազրու) = «Մարդուկ կենդա-նացուցանէ զիիսկ մարդու» :

Ըլշագրութեան արժանի է նաև որ Մարտով կասառածոյ անոնն հոռ և ուրիշ աեղեք ՍԱԼԻՒՐ-ՄԱՐՈՎԱՆԻ-ՇԱՄ ձևալ ալ կը դրոի, որ կը նշանակէ — « իշխան որ մարդու առնէ մարդոց », մինչդեռ գործածուած սովորական ձեւն է ԱՄԱՐ-ՌԻՏ. ուրեմն առաջին ձեւն Սարդուկի մակիրներէն մին է : Դարձեալ՝ « քահանայ աստուածոց » մակիրն մըն է, որ կը արուէք սեմական ազգաց մէջ ասածնակարգ աստուածոց մերձ և աննոց ծառայոց հաճնէլի անձնաւորութեանց . այսպէս՝ « Մերթիսեեցիկ էր քահանայ Աստուծոց բարձրելցյն », ըստ Գրոց : Արձանագրութեանց մէջ ալ կը դիտուի այս ինչպէս՝ կ. Պոլսոյ Հնումթեանց թանգարանին մէջ պահուած դադաղի մը կիրայի փինիկերէն արձանագրութենէն գիտենք, թէ Տարմիթ կը կոչէ ինքնինք — « քահանայ Աստարավիթի . . . , որի իշմանազարի, քահանայի Աստարավիթի . . . », ըստ իմ թարգմանութեանու : (Տե՛ս այս մասին Սովորի հանու. 1895, - երես 138):

Ուրեմն մեր Յարակէզք ասորաբաբլինեան  
աստուածներ էին և անուած այն մեծ պե-  
տութեան ազգեցութեան տակ, բայց ոչ ան-  
շուշա Շամիրամայ ժամանակ, այլ յառաջ  
քան շՇամիրամն. վասն զի Շամիրամայ ժա-  
մանակ արդէն հսկ կը հաւատային Հայք  
Յարակէզներս զգութեան, և այս պատճա-  
ռաւ է որ յուտ մը հաւատացին Շամիրամայ

**տաեցի թէ Մարդուկ ի՞նչ ընելով «Կը կեն-  
դանացունէ զիակիները»։ Միգելին, թէ այլ  
ինչ ընելով։ Աւասիկ բռն հատակոտորին  
այս մասն։**

Խոսքին — « Ակեղել աստուածոցն զԱրյա և  
կենդանացցեցել լցին զփափակ մեր<sup>1</sup> » :  
Յարակներու առորաբարեցնեան աստուած-  
ները ըլլալուն ի կորմն է նաև լանգուա-  
— « Ces dieux secondaires (Յարակնեզ),  
qui étaient passés de l'Assyrie dans le  
panthéon arménien, persistèrent dans  
les croyances du peuple d'Haïg, même  
après l'introduction du christianisme ».  
(Collect. des hist. de l'Arm., Ա, երես  
26, ժամոթ. 4) : Բայց զայս հաստատելու  
համար աւելի զօրաւոր պահպայց է նոյն խակ  
Շամիրամայ բերանը զրուած սա խօսքն.  
« Հրամայեցի աստուածոցն իմոց լիզով զվերս  
նորա », պայմինքն Շամիրամ իւր և իւր ազ-  
գին պաշտած աստուածներուն հրամայեց :

կ'երևայ թէ Յարալէզներու զգութիւնը  
ծանօթ էր նաև Յունաց. վասն զի, ինչպէս  
ըսինք ուրիշ տեղ ալ, (Բառ. 1897, երես  
77), Պղասան իւր Պոլաւեա զրոց վերջները  
կը յիշէ էր կամ Յէր անուամբ մէկն, որդիի

4. Այս յօդուածին մէկ մեր նպատակէն գուրքա  
է զբաղէն Շամբարայ անձին դոյցի թեամբը  
որ ճնշունդ առած է Եսոյն պատմէնելու երկար  
կայական գրին առաջ. այլ միայն մեր առաջա-  
դաս նիւթը պաշտպանելու համար վկայ կը  
բրենք անոր վերադրուած առասպելական զը-  
բույցն:

Արմենի, ծագմամբ պամփիլացի, որ՝ ըստ Հանգուայի (աղո)և Մ. Էմինի<sup>1</sup> (խոր. ուսու., երես 254 և 255) նոյն է մեր գեղեցկին Արայի հետ։ Պղատոն կ'ըսէ թէ այս Յէր (Հօծ) պատերազմի մը մէջ իյնալէն տասն օր յետոյ՝ երբ փասծ զիակները կը վերցունէին, անոր մարմինն առողջ և անազարա գտան։ և ապա իր տունը տանելով՝ երկոտասաններորդ օրն երբ խարսկի վերայ դրին, կենդանացաւ ու պատմեց ներկայից ինչ որ տեսած էր հանդերձեալ աշխարհին մէջ։ 'Ալλօն մենու ուս, ին ճ'եցա, 'Ալքինոս ց ձոքալոցոն երջ, ձլլալքիմոս մեն ձնծրծ, 'Իօծ, ուս 'Արմենու, ու ց ցոնս Պարմֆուու ծ ուտե են ուոլէմփ տելեւտիհաս ձնաւրժեթնտան ծեխաւան տն տեքրան դիջ ծւեժարմենան նցիչ մեն ձնդրժդ, կոմւսիւէ ծէ օլքած մէլլան թնուուժաւ ծածեկաւան էու ոյ ուրզ հելւենոս ձնենիւ, ձնաբունչ ծ'ձլեցւ ձ էւէ լիօն։ (ΠԼԱ'ΤΩΝ, Պոլիտեա, Փ.)

Ո՞վ էր Մարդուկ. — Մարդուկ (*Marduk*)<sup>2</sup> Ս. Գրոց Շարաք (ըստ մեզ «Մերովակ»), զոր անո Երեմ. Ծ, 2) աստուածն է և Ասորաբանելացոց երկորդական աստուածներէն մին, որ ապա Բարելոնի գրլխաւոր աստուածը զարձաւ, այնպէս որ մինչեւ իսկ շփոթել սկսան զայն թէլի հետ (Հմն. MASPÉRO, *Hist. anc. des peuples de l'Orient*. Paris, 1893, երես 144)։ Այս շփոթութիւնը զիսաւարապէս յառաջ եկած է անկէ՝ որ Մարդուկ Բարելոնի տէրը կը համարուէր, և այս պատճառաւ իր բոն անունն զատ զինքն կը ճանչացին թիշու = «տէր» անուամբ եւս, որ դիւրաւ կրնար շփոթուիլ բոն թիշու = «թէլ» աստուածոյ հետ։ Բարելոնի կործանման նըկատմամբ Երեմիայի մարգարէութենէն իսկ զիտենց, թէ թէլ և Մարդուկ տարբեր աստուածներ էին, բայց Երկուքն ալ յարգի առ Բարելացիս։ — «Պատմեցէք յազգս՝ և լու արարէք, նշան կաննեցէք, լսելի արարէք. մի ծածկիցէք, ասասջիր առ Բարելոն։ յամօթ եղան թէլ. փափուկն աներկիլդը. մատնեցաւ Մերօդաք, յամօթ եղեն կուոք նորա, ամաշեցին գարշելիք նորա»։ (Երեմ. Ծ. 2)։

Բարելատանի մէջ՝ Եղիպտոսի նման՝ աստուածոց տաւատկանութիւն մը կար : Այս աստուածներն իրարու հետ զայնակցելով տեսակ մը աստուածային դաշնակցութիւն կը կազմէին, որուն կը նախազահէր ամենակարող և զիրազյն երրորդութիւնն — Անու, թէրու և ի խա : Եթեոյ կու զար երկրորդ երրորդութիւն մը — Այս = «Լուսին աստուած», որ կը համապատասխանէ տոսպական արձանագրութեանց «Արդինի ինն, Բաման = «Օդ աստուած», որ կը համապատասխանէ նոյն արձանագրութեանց «Տէլիքա»ին։ Այս երկրորդ երրորդութեան կը յաջորդեն հինգ ուրիշ աստուածներ, որոնց մոլորակաց իբրու պահապան ճանցուած էին, — Նիենիս՝ Երմակի, Մարդուկ՝ Լուսնթազի, Ներգալ՝ Հրատի, Իշտար՝ Ալուսեակի և Նարու՝ Փայլածուի :

Արդ, ինչպէս տեսանք վերը լանզուայի ըստան Յարալէ զներու մասին՝ թէ երկրորդական աստուածներ են, — «dieux secondaires», — այսպէս նաև հոս ալ կը տեսնենց՝ թէ Մարդուկ երկրորդական աստուածոց դասէն է : Բայց Նիուուէի կործանումէն, յետոյ Բարելոն ծաղկեցաւ, և Մերովակ՝ Նարուպուասարի և Նարուքորորսորի<sup>1</sup>

1. Անուալ է Նարուքուպուսոոր ձեն, զի տռանց կարեուուիլին տալու որ Ա. Գրոց Կոթանանից թարգմանութիւնն առնի Նախուծօնօծօր, որուն կը համեմատին թէշիտու, Վուլպատան և եռըսյական բնապրին քանի մը (Թագու, Երեմ., Նոթ. և Դան.), գրոց մէջ ՀՅԱՂՐԿՈՎՈՒ ձեն, նոյն երբայական բնապրին ուրիշ տեղիդր (Երեմ., Եղեկ. և Եղը) հշգիւ գրուած կայ ՀՅԱՂՐԿՈՎՈՒ ձենով. Այսպէս միշտ ունի նաև Սարարոն — Նաօսօքրօօրօց. Գալով ասորենաստեան արձանագրութեանց, հոն ևս շշշիւ կը զանենք Նարու-կոտորդրի-ուցուր ձեռվ որ կը նշանակէ «Նարու աստուածն իմ զահս կը պաշտպանէ», ինյակս արդի դրամներէն սմանց վրայ, զ. օ. Քաննիսականին Dieu protège la France. Ուրեմն ուղղագոյն ձեւն է Նարուքուպուսոր. Այս պէսալում յառաջ եկած է երբայցից

ժամանակ թարելաստանի աստուածոց ամենակարողն եղաւ. մինչեւ իսկ Նարունահիդ փորձեց իր պետութեան միակ և զերագյու աստուածն ընել, ինչ որ էր Աշուր Ասորեստանի համար. այս նպատակաւ իր երկին բոլոր աստուածներն հաւաքելով թարելոն տարաւ ու զետեղեց Մերդուկի բոլորտին: թարելուց այս բանը ժողովրդեան և մասնաւանդ քրմաց շաա հաճելի չեղաւ, ուստի այս վերջիններուն դրդամբ ժողովարդն ապստամբեցաւ. Նարունահիդի գէմ, որով Պարսից յաղթանակը դիւրացաւ և կիրոսի ձեռամբ վերջ զտաւ թարելաստանի վերջին հարստութիւնն (538 Ն. Ք.) ու Մերդուկի կարամատեւ գերիշխանութիւնն:

Թէ այս անկուսին յետոց տակախն կը պաշտօէ՞ր Մարդուկ, — այսափ կրնանց Փառել՝ թէ Սընեցւոց ժամանակ խառանի մէջ կար ասկախն կապաշտութիւնն և ասաեղապաշտութիւնն, որ թարելաստոցմէ մնացած էր և զոր կը պահպանէին Ոսրէացիք. այս կոոր մէջն էր անդուշտ և Մարդուկ, որուն կ'ակնարկէ Սընեցի իր վերի խօսքերով: Այսէս նաև և առ մեր կը գտնենք անոր հետուն մինչեւ քրիստոնէութեան Դ դարուն վերջերն, Մուշեղի գէպըին մէջ ըստ Բուզանդյա, ինչպատ անանց վերը:

Այս ամէնէն կրնանց հնեացընել, թէ Ասորաբելացաց Մարդուկն իր շորս հետեւրդ չներով անցած է Հայոց, ի իրենց բուն անուան տեղ՝ իրենց կասարած զօրծողաւթեան պատճառու։ կոչուած են եազէն «Յարալէքք» ։ յար լիզոզք։

Մարդուկ պահպան ըլլալով լուսնթափի և իրեն ընծայուած բարձր պաշտօնին համար կրնայ համեմատուիլ Յունաց Հօնչին հետ, որ է Պարսից Անորո մազդան և յեր Արամազդն. մանաւանդ որ Յունաց և Հոռով-

մայեցւոց մէջ Հօնչ = Juxpter նպնպէն պահպան կը նկատուէր լուսնթափի. բայց այս երկուքին մէջ եղած տարբերութիւնը աս է՝ որ Արամազդ «արարիշ երկնի և երկրի» (Ագաթ. Ե) էր, մինչեւ Մարդուկ էր «կենանացուցիշ զիսականց», ինչպէս անանց վերն է իսկ թրիտանական թանգարանին ատորերէն ձեռազբերէն միայն համեմատ (որ կը խօսի քիմիարարութեան (alchimie) վերայ, և որ մետաղաց անուանն կցուած են ոչ միայն իրենց համապատասխան մնորակաց, այլ նաև և բարելախան աստուածոց) «անագ, որ նշանակուած է Զնսով և միանցամայն թէլով». (Հման. Berthelot, La chimie dans l'antiquité, ի հանդիսին Recue des deuas mondes, 1893, երես 335): Ուրեմն՝ ըստ ձեռազբին Անագ = Լուսընթագ = Զնս = Արամազդ = թէլ է, և ոչ թէ Մարդուկ. բայց ինչպէս վերը՝ նոյնպէս հոս թէլ շփոթուած է Մարդուկի հետ. ուստի՝ պահպան թէլ բարելով անշուշտ՝ պիտի հասկընանց Մարդուկը միայն:

\* \*

Ներկայ աշխատութիւնս վերջացընելէս և տպագրութեան յանձնելէս եաբը՝ աեստթիւն մը ունեցայ Ուսուցչապետ Պին. Յ. Հալէվիի հետ, որուն յայսնեցի թարալէզներու և Մարդուկի նկատմամբ ունեցած կարծիքու ։ Սեմազէտ թարեկամն իր հաւանութիւն յայսնեց, և այս առթիւ նիւթ մը առաջարկեց ինձ ուստմասիրելու համար. այն է թէ՝ Պերսէպոլսոց բեռապիք արձանագրութեանց մէջ կը յշուի Արախ անուամբ հայ մը, որ թարելացիները զրգելով Պարսից գէմ՝ պատերազմած է այս վերջոցս հետ ։ Արդ չի կրնար ըլլալ որ հայ պատմազիրներէն յիշուած Արայն, որ Ասորեսասանեայց (Շամիրամի) հետ պատերազմած է, Գերուեկուլոյ արձանագրութեանց մէջ յիշուած Արախն ըլլայ։ Պատմութեան մէջ, արձանագրութեանց յինով, գյուղթիւն ունի Արախ մը. ասիիս անուբանալի է. բայց Շամիրամայ հետ պատերազմուն Արայ մը՝ երեւակայական և կեղծ միայն կրնայ ըլլալ, քանի որ նոյն ինքն

գաղափարովներու անուշագրութիւնէն, որով Դ (րէշ) տառն Ա (Առան) տառին հետ չփոխելով երկու ձեւերն ալ գործածած են, թէ և բացարձակապէս կ'երեայ թէն անխական բնագիրն անպատճակով գրուած պէտք է լինի, ինչպէս կ'ենթազրէ առորեասաներէն ձեն և անուանը նշանակութիւնն:

շամիրամ՝ առասպեղական անձնաւորութիւն մըն է : Ռւստի հայ պատմիչք, բերնէ բերան տարածուած Արախի պատմութիւնն՝ իրրեւ հայ թագաւորի մը պատմութիւն, իրենց զրուածոց մէջ անցուցած են. և որովհետեւ Արեմենեանց հարստութիւնը շատոնց դաղրած էր հայ պատմագրաց զոյութեան ժամանակ, և աւանդութիւնն ալ կ'ըսէր թէ Արախ դործ ունեցած է Բարեղացոց հետ, հայ պատմագիր՝ Բարեղացոց աեղ Ասուրեստանցիները զրած են մէջ աեղ և անոնց հետ պատերազմեցուցած Արախն, որուն առուան վերջին կոկորպային տառն (իս) ինկած էր արդին ժամանակին ընթացքովն և եղած Արա » :

Յարգելի բարեկամիս այս զիտոսութիւնն աւշագրութեան արժանի զատկելով՝ կրկին և կրկին անզամեներ կարգացի վերոյիշեալ Արախի պատմութիւնն, բայց ո՛չ Գերեխովուց արձանագրութեանց մէջ, այլ Բեհիստունի երեցի զուեան (հին պարսկական, մարական և ասորեստանեան) բևեռագիր արձանագրութեանց մէջ՝ Ահա Բեհիստունի ընդարձակ արձանագրութեան այս մասն.

« Ասէ Գարեն արբայն. իմ Պարսկաստան « և Մարաստան գտնուած միջոցի՝ Բարեցից երկրորդ անզամն ըլլալով կը բաժ. « Նուէին կուտակցութենէս : Արախ անուամբ և մարդ մը, (ազգա) հայ, որդի Հալզիւ և տայի<sup>1</sup>, Բարեղոնը դրգուց. Դուրալա առ և նուն զաւուն պատամբեցուց՝ այսպէս սուտ և խօսելով. « Ես Նաբուգոդոնոսորն եմ, որ և դին Նաբունիս : Այն ատեն Բարեղացից, Բարեղոնի մէջ : Ահա այսպէս մեռան » :

« Կ'անցնէր, արքայ հոչակեցին թարելոնի » : (Ցիս. Գ., տող 48) :

« Ասէ Գարեն արբայն. Ռւստի զօրախում. « բեր զրկեցի Բարելոն : իմ ծառայներէս « Վինդափրա անուն Մ'արացի մը հրամանաւ. « տար զնելով բանակաց՝ զրկեցի այսպէս և ըսելով. « Գնան և ցրուէ պատամիր բառ « նակն, որ զիս չի ճանչնար ի Բարելոն » : « Վինդափրա իր զօրքերով Բարելոնի վրայ « արշաւեց : Արամազգի ինձ օգնեց : Շնորհի « Արամազդի՝ Վինդափրա Բարելոնի զօրքերը « ցրուեց և զոմանս զերի վարեց : Անոնց « հետ ապստամբած ժողովլւրզն՝ ինձ հնաւ « զանդեցաւ : Քանաներորդ երկրորդ օրն մեւ « տասաներորդ ամսոյ՝ այս Արախ, որ ըսած « էր թէ « Ես Նաբուգոդոնոսորն եմ », ձեր « բակալուեցաւ իւր զինաւոր գործակիցներուն « հետ միախն : Ինձի բերուեցան : Յայնժամ « վճիռ մը արձակեցի, այսպէս. « Արախ և « իւր զինաւոր գործակիցը ի խաչ հանուին « Բարելոնի մէջ » : Ահա այսպէս մեռան » : (Ցիս. Գ., տող 44)<sup>1</sup> :

Արախի այս պատամիրութիւնը պասահած է 513 թուին (Ն. Գ.), ըստ յիշասակարանց. ուստի մեր ազգային պատմազիրներէն գարերով յասահազոյն. սակայն եթէ համեմատենք զայն Պատասոնի վերոյիշեալ Երին հետ, գրեթէ ժամանակակից կը զըտնենք երկուքն ալ, « կնասելով որ Պատասոն ապրած է 429—347 (Ն. Գ.) : Արդ, կամ այն է որ Բեհիստունի արձանագրութեանց մէջ յշուած Արախը մեր պատմագրաց Արայն և Պատասոնի Երը չէ, և կամ այն է որ Պատասոնի Երը Բեհիստունի Արախն և մեր Արայն չէ : Ես աւելի առաջին կարծիքէն եմ. վասն զի եթէ Բեհիստունի Արախը մեր Արայն և Պատասոնի Երն ըլլար, Պատասոն չափաի բաէր թէ Եր « պատերազմի մը մէջ մեռնելէն յետոյ . . . փտած զիսկ-

1. Այս հատոււածն այսպէս զրուած է աքեմենեան բնագրին մէջ. և Մ'արտիյա Արախս նաման Արևինիյա Հարդիստահյա պառարա = և Ա. մարդ, Արախ անուն, Հայ, Հալզիտայ որդի ». իսկ մարական բնագրին այսպէս ունի. Բուռ կիր Արակիս հիշէ Հարմինիյարիիր Հալզիտա շաբրի = « Մարդ մը Արախ անուն, Հայ մը, Հալզիտայ որդի » : Ասորեստանեան բնագրը քիչ մը կը ասքերի, այսպէս. Նիշու Արախս ապաւ Խարդիստա = « Ոմ Արախ, որդի Խալզիտայ », ասանց Հայ ըլլալն ըսելու :

1. Աքձանագրութեան վերջին մասը, Գարենին աքձակած գնիւռն է Արախի սպաննուիլը, կոտրած է աքեմենեան բնագրին մէջ. ուստի ևս ամրոշացուցի այս մասն ասորեստանեան բնագրին հետեւլով :

ներս . մէջ գտնուեցաւ անոր մարմին» . այլ պիտի ըստք , ըստ թէհիստունի արձանագրութեան , թէ Արախ «ձերբակալուեցաւ . . . (Դարբէհի) բերուեցաւ ։ Արախ և իւր զինաւոր գործակիցք ի խաշ հանուեցան բարելոնի մէջ : Ահա այսպէս մեռան» , և ոչ «պատերազմի մը մէջ . . .» :

Ըստունելով որ մեր Արայն առասպելական անձնաւորութիւն մըն է , ինչպէս և Շամիրամն , չեմ կրնար ըստ թէ Պատասնի կրին հետ նոյն չէ . զի երկուքին մէջ ալ պատերազմի մէջ մեսմիշ և վերսոտին կենդանամալ կայ . որով ուրիշ աղբիւր մը կ'ենթագործի :

Կ . Յ . ԲԱՍՄԱՆՃԵԱՆ

ՊԵՐԵ 4 ՀՅ-ԻՒ 1897:



## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՎԱՆԱՑ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՑ

Այս յօդուածս թարգմանութիւմ է՝ «Note on the Van inscriptions» խորազով այժ գրուածքիմ , որ հրատարակուեցա *Journal of the Royal Asiatic Society* , 1897 , յուլիսի պարակիմ մէջ : Յօդուածագիրն է նոյն իմքն ծանօթ մասմագէս և բամասէր Պր . Կ . Յ . Բասմանչան , որուն սրամիտ անդրադարձութիւնքն է ուղղութեան սրբազնութեան մէջ չ տարածուած արձանագրութեանց , թէ ազգային և թէ եւրոպացի մասմագիտաց համակրամաց արժանացած է . իսկ Պարիսու այս վերջին Արևելացիւ տաց համարական գրաւութեանց մէջ , ու Խ . . . Շոշացուց և Մարաց մէջ , աղամ Խ . . . Աքեմենեանց մէջ , և այլն :

Գրեթէ ամեն տեսակ բնելուաձև արձանագրութեանց սիլիցն , թէ Ասորեստան-Բաբելոնեան , թէ Շօշական , թէ Մարական և թէ Աքեմենեան , հասարակ ձև մը կայ (general formula) , ինչպէս անակոչ Խ . . . Ասորեստան-Բաբելուցոց մէջ , ու Խ . . . Շօշացուց և Մարաց մէջ , աղամ Խ . . . Աքեմենեանց մէջ , և այլն :

Այս բանակել Հայաստանեան արձանագրութեանց մէջ չ գտնուիր . բայց որովհետեւ Ասորեստան-Բաբելոնեան արձանագրութեանց մէջ կը գտնենք որ անակոչ անձնական գերանուը պարբերութեանց վերջը կը գործածուիր , և ուստամականը կը հաստատեն թէ Այրարաւան-Նախիրեանը իրենց գրութեան ունը ասորեստանցիներէն առեր են , մենք այս հետեւանքը կը հանենք՝ թէ հայ արձանագրութեան Ա-Ա-Ա- բառը նոյն արժեքը ունի , ինչ արժեքը որ ունի Ասորեստան-Բաբելոնեան արձանագրութեանց անակոչ սերանանը ; Շօշացուց և Մարաց ու Աքեմենեանց աղամը , որ կը նշանակէ «Ես» , Աւրեմն պէտք է թարգմանենք այս հասուածը Argistiš , alie , haubi

**Յ**ՈՐՄԷ հետէ եւրոպացի զիտնականը սկսան բնեռազրաց քննութեամբ պարապիլ , մասնաւոր ուշագրութեան նիւթ ըրին Հայկական կամ Վանայ բնեռագիր արձանագրու-